

Գոռ Ավետիսյան

Ծնվել է 1988թ. հոկտեմբերի 18-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղում:

Կրթություն՝

- 2005-2009թթ.- սովորել է ՀՀ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:
- 2009-2011թթ.- սովորել է ՀՀ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն» ֆակուլտետում և ստացել ճարտարագիտության մագիստրոսի աստիճան:
- 2007-2011թթ.- Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում ստացել է Սերգեյ Համբարձումյանի անվանական կրթաթոշակ:
- 2021-2023թթ. սովորել է ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «Շինարարություն» ֆակուլտետի ճանապարհների և կամուրջների ամբիոնում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

Աշխատանքային գործունեություն՝

- 2007-2008թթ.- ՀՀ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Նյութերի դիմադրության» ամբիոնում՝ լաբորանտ:
- 2011-2012թթ.- «Լյուդվիգ Պֆայֆեր» գերմանական ընկերությունում՝ աշխույժ:
- 2012-2015թթ.- «Շանթ-Սեյրան» ճանապարհաշինական ընկերությունում՝ գլխավոր ճարտարագետ:
- 2012-2018թթ.- «ԱԼ-ՄՍԱՔԱ» ՍՊԸ տնօրեն:
- 2013թ.- համատեղության կարգով աշխատել է «Հովտաձոր» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:
- 2018-2019թթ.- «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:
- 2019թ. հուլիս-դեկտեմբեր- «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ում՝ որպես հանձնակատար՝ տնօրեն:
- 2020թ. փետրվար-մայիս- «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ:
- 2020թ. մայիսից մինչ 2022թ. փետրվարի 7-ը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական:
- 2022թ. փետրվարի 7-ին նշանակվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն:

Անձնական տվյալներ՝

Ամուսնացած է, ունի 3 երեխա: